

Լրատու

Թիւ 7
Ապրիլ 2008

Կիպրահայ Համայնքի Պետական Ներկայացուցիչի Գրասենեակի

Միրելի հայրենակիցներ,

2008 թուականը կրնանք ճակատագրական տարի մը համարել մեր զոյգ հայրենիքներուն համար, նկատի ունենալով որ Փետրուար ամսուան ընթացքին թէ՛ Կիպրոսի եւ թէ Հայաստանի մէջ կայացան նախագահական ընտրութիւններ:

Այս նախագահական ընտրութիւնները անկիւնադարձային կը համարեմ, ի մտի ունենալով թէ երկու պետութիւններն ալ ունին գրաւեալ հողային տարածքներու հարցեր, որոնց լուծման գործընթացը բարդ է, սակայն յոյսով ենք, որ 2008 թուականը ըլլայ արդիւնաւետ տարի մը հարցերը կարգաւորելու հեռանկարով:

Գալով Կիպրահայ համայնքի քաղաքական դիրքորոշումին, վստահ եմ, թէ բոլորդ նկատեցիք թէ այս գծով որոեգրեցի չեզոք կեցուածք, ամեն բանէ առաջ միշտ նկատի ունենալով Կիպրահայ համայնքին ընդհանրական շահերը եւ մեր երկրին՝ Կիպրոսի հարցին բարուք լուծումը: Իմ դիրքս քաղաքական շրջանակներէ ներս եղաւ համագործակցութեան բնոյթ կրող՝ Կիպրոսի որեւէ իշխանութիւններուն նկատմամբ, մէկդի լսելով այս կամ այս կողմին գաղափարախօսական պատկանելիութիւնը:

Կը փափաքիմ տեղեկացնել, թէ ներկայ նորընտիր կառավարութեան քաղաքական դէմքերէն շատերուն հետ ունիմ բաւական լաւ յարաբերութիւններ, որոնք յաջորդող տարիներուն առաւել եւս պիտի ամրապն-

դեն մեր գաղութի իրաւունքներն ու պահանջքները: Իշխանութեան լրիւ անձնակազմին ուղղեցի շնորհաւորագիրներ, փոխասցելով իմ ու գաղութիս շերմ բարեմաղթութիւնները, յայտնելով մեր գօրակցութիւնը անոնց ստանձնած դժուարին առաջելութեան մէջ:

Իսկ Մարիոս Կարոյեանի խորհրդարանի Նախագահ ընտրուելու նախօրեակին եղած անհիմն ամբաստանութիւնները անոր հայկական ծագումին առնչութեամբ, մամլոյ ուղղուած հաղորդակցութեամբ մը խիստ ձեւով դատապարտեցի, որպէս Կիպրոսի սահմանադրութեամբ ընդունուած եւ ճանչցուած կրօնական փոքրամասնութիւն, համահաւասար քաղաքացիի իրաւունքներով եւ պարտաւորութիւններով:

Սիրելիներ,

Գալով մեր առօրեայ աշխատանքներուն, 2008 թուականի առաջին եռամսեան եղաւ կառուցողական, որուն արդիւնքը պիտի ստանանք յառաջիկայ ամիսներուն եւ տարիներուն ընթացքին:

Մեծ յաջողութեամբ կազմակերպեցինք Հայաստանի Հանրապետութեան Յունաստանի եւ Կիպրոսի դեսպանատան Յիւպատոսի այցը, որ սերտ գործակցութեան արդիւնք էր, գոհացում տալով Կիպրոս բնակութիւն հաստատած Հայաստանի քաղաքացիներու հիւպատոսական հարցերուն:

Վստահ եմ, որ ձեզմէ շատերը այս «Լրատու»ի թիւն մէջ կը սպասէին գտնել Մակարավանք ուխտագնացութեան թերթիկը, սակայն այս տարի որոշեցինք չիրագործել այս մէկը, նկատի ունենալով որ Յոյն ուղղակառ եկեղեցւոյ Ս. Զատիկը (27 Ապրիլ) կը գուգադիայի Մակարավանք այցելութեան թուականին նախավերջին շաբթօւան եւ այս առիթով պաշտօնական

հրամաններու եւ կառավարական գրասենեակներու հետ կապուած աշխատանքներուն կարգաւորումը, որ մեր փորձառութենին մեկսելով կ'ամբողջանար վերջին շաբաթներուն, արգելք պիտի հանդիսանայ մեր կողմէ կարեւոր դասաւորումներուն: Այս բոլորին կողքին կու գայ աւելսալու Մայիս 1-ի արձակուրդը: Հետեւաբար, շնորհակալութիւն կը յայտնենք ձեր ազնիւ հասկացողութեան:

Սօտալուտ ծրագրուած ձեռնարկները կազմակերպուած են Երեսփոխանական Գրասենեակի Երիտասարդական Յանձնախումբին կողմէ՝ Նիւթ ունենալով ճամբու Ապահովութեան Կանխազգուշութիւն (Raising Road Safety Awareness), որոնք տեղի պիտի ունենան Մայիս 9-ին եւ Մայիս 16-ին յաջորդաբար, Նիկոսիոյ Bank of Cyprus-ի կեդրոնական շենքին «Solona Triantafyllides» սրահին մէջ: Նկատի ունենալով, որ ճամբու արկածներու ցանկի վրայ Կիպրոս կը հանդիսանայ 2-րդ երկիրը Յունաստանին ետք, կոչ կ'ուղղենք մեր սիրելի Երիտասարդներուն եւ ծնողներուն անպայման ներկայ գտնուիլ, մօտեն յսելու եւ ծանօթանալու ճամբու արկածներուն պատճառներուն եւ անոնց ունեցած ծանր անդրադարձը մարդոց կեանքին մէջ (տեսնել ներփակուած թերթիկ):

Խօսքս վերջացնելով, Զայ Առաքելական Եկեղեցւոյ Ս. Չատիկին առիթով ընդունեցեք իմ սրտագին մաղթանքները:

Զրիստոս յարեաւ ի մեռելոց, օրինեալ է Յարութիւնն Զրիստոսի:

Վարդես Մահտեսեան

Կիպրահայ Զամայնքի Պետական Ներկայացուցիչ

ԵՌԱՄՍՄԵՎՅ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹԻՒՆ

Քաղաքացիական հարցեր եւ կեցութիւն

Քաղաքացիական հարցերու գծով տարուած աշխատանքները նոյն ձեռվ շարունակուեցան, ի մասնաւորի կեցութեան եւ աշխատանքային արտօնագիրներ ապահովելու կապակցութեամբ: Երկու անհատներ, մեկը Նիկոսիային, իսկ միւսը Լառնաքային, ստացան աշխատանքային արտօնագիր: Յու յարմար կը նկատենք յիշելու, թէ աշխատանքային արտօնագիր ապահովելու գործողութիւնը կ'ենթադրէ շուրջ 2 ամիս աշխատանք եւ հետապնդում:

Կիպրոս անօրէն բնակած ըլլալուն պատճառով, հայրենակից մը բանտարկութիւն եւ երկրին դրւոս արտաքսում ստացաւ, սակայն Պրն. Մահտեսեանի միջամտութեամբ արտաքսման որոշումը բեկանուեցաւ եւ անհատը ազատ արձակուեցաւ 3 ամսուայ կեցութեան արտօնագիրով:

Գալով կեցութեան հրամաններուն, անոնց առաջում մը Մարտ ամսուան ընթացքին յապաղում արձանագրեց, Ներքին Գործոց Նախարարութեան Օտարահպատակներու եւ Ներգաղթի Բաժանմունքին (Alien & Immigration Unit) համակարգիչներու ցանցի (computer network system) անգործութեան պատճառով:

Այցելութիւն բանտարան

Նոր Տարուան առիթով Ուրբաթ, 21 Դեկտեմբեր 2007-ին, Պետական Ներկայացուցիչը, ընկերակցութեամբ Տէր Մոմիկ Քինյ. Հապէշեանի, այցելեց բանտարան եւ մօտեն տեսակցութիւն ունեցաւ հայ բան-

տարկեալներուն հետ:

Այցելութիւն «Գալայճեան» Հանգստեան Տուն

Կիրակի, 30 Դեկտեմբեր 2007-ին, Տեր եւ Տիկին Վարդգես Մահտեսեան, ընկերակցութեամբ Թեմիս Կաթողիկոսական Փոխանորդ Արք. Վարուժան Հերկելեանի, այցելեցին «Գալայճեան» Հանգստեան Տուն եւ



Ամանորեայ անհատական նուերներով պատուեցին մեր տարեց հայրերն ու մայրերը, շնորհաւորելով անոնց Նոր Տարին եւ Ս. Ծնունդը:

Շնորհաւորական գիրեր

Կիպրահայ Համայնքի Պետական Ներկայացուցիչը նամակով մը Յինգշաբթի, 21 Փետրուար 2008-ին թէ՝

Կիպրահայ գաղութին անունով եւ թէ անձնապէս շնորհաւորեց Հայաստանի Հանրապետութեան վարչապետ Պրև. Սերժ Սարգսեանի ընտրութիւնը՝ իբրեւ նախագահ Հայաստանի Հանրապետութեան, յուսալով որ յառաջիկայ տարիներուն Հայաստանի քաղաքական կեանքը ալ աւելի կ'ամրապնդուի ու մեր պետականութիւնը կը զօրանայ ի նպաստ մեր ժողովուրդի գերագոյն շահերուն:

Երեքշաբթի, 26 Փետրուար 2008-ին, Պրև. Վարդգէս Մահտեսեան յատուկ շնորհաւորագիր մը յηեց Կիպրոսի Հանրապետութեան նորընտիր նախագահ Պրև. Տիմիթրիս Խրիստոֆիասին, շնորհաւորելով զայն եւ յայտնելով Կիպրահայ գաղութի զօրակցութիւնը մասնաւորաբար Կիպրական հարցին լուծման գծով: Շարունակելով, Պետական Ներկայացուցիչը վստահութիւն յայտնեց, թէ Պրև. Խիստոֆիաս պիտի շարունակէ հետաքրքրութիւն ցուցաբերել ապահովելու Կիպրահայ համայնքի ազգային, կրօնական եւ մշակութային արժեքները այս կղզին ներս, որը մենք իբրեւ հայրենիք կը ճանչնանք:

Իսկ Ուրբաթ, 29 Փետրուար 2008-ին, Պրև. Մահտեսեան անհատական շնորհաւորագիրներ ուղղեց նորակշանակ Նախարարներուն, բոլորին մաղթելով յաշողութիւն իրենց ստանձնած առաքելութեան մէջ:

Երեքշաբթի, 11 Մարտ 2008-ին, Պրև. Վարդգէս Մահտեսեան նամակով մը շնորհաւորեց Հայազգի Պրև. Մարիոս Կարոյեանը Կիպրոսի Խորհրդարանի նախագահ ընտրուելուն առիթով, մաղթելով անոր արդիւնաւետ գործունեութիւն, ինչպէս նաեւ որպէս Կիպրահայ Համայնքի Պետական Ներկայացուցիչ իր լրիւ զօրակցութիւնը ու գործակցութիւնը յայտնեց անոր:

Մամլոյ Հաղորդագրութիւն

Կիրակի, 2 Մարտ 2008-ին, Պրև. Վարդգես Մահտես-
եան մամլոյ հաղորդագրութեամբ մը իր ընդվզումը
յայտնեց Սարիս Կարոյեանի խորհրդարանի նախա-
գահութեան թեկնածութեան վերաբերեալ եղած ան-
տեղի յայտարարութիւններուն, որոնք ցեղապաշտու-
թեան սահմաններուն կը մօտենան եւ կը վերաբերին
Պրև. Կարոյեանին հայկական ծագումին:

Ան իր հաղորդագրութեան մէջ նշեց, թէ Կիպրոսի
հայերը երկար ու արժանապատիւ ներկայութիւն ու-
նին Կիպրոսի մէջ եւ Յայ համայնքի ընկերային, մշա-
կութային եւ քաղաքական հաւասար իրաւունքները
ճանչուած են Սահմանադրութեամբ, ճիշդ այնպէս,
ինչպէս Կիպրոսի Յանրապետութեան բոլոր քաղաքա-
ցիներուն իրաւունքները: Ծարունակելով, ան դատա-
պարտեց նման վերաբերումները, որոնք չեն վայելեր
Եւրոմիութեան անդամ Կիպրոսի Յանրապետութեան,
աւելցնելով, որ բոլոր պէտք է կեղրոնանանք գտնելու
կիպրական հարցին արդար եւ մնայուն լուծում մը, որ
պիտի ապահովէ Յոյն, Թուրք, Յայ, Սարոնիթ եւ Լա-
տին կիպրացիներու հաւասար իրաւունքները:

Վերոյիշեալ հաղորդագրութիւնը լոյս տեսաւ գրեթէ
Կիպրոսի բոլոր տեղական օրաթերթերուն մէջ, ներ-
առեալ Լիբանանի «Ազդակ» օրաթերթի 14 Մարտ
2008 թուակիր իրատարակութեան մէջ:

Պետական-պաշտօնական մակարդակի հանդիպումներ

Ուրբաթ, 21 Դեկտեմբեր 2007-ին, Պրև. Մահտես-
եան հանդիպում մը ունեցաւ Շուետի Կեթըպօրկ Պատ-
մութեան Ընկերակցութեան պատասխանատու

Դոկտ. Յօլմըն Պեմկեթի հետ:

Ուրբաթ, 11 Յունուար 2008-ին, Պետական Ներկայացուցիչը հանդիպեցաւ Փոքրամասնութիւններու հրաւունքներու Միջազգային Խմբակցութեան անդամ Տիկ. Մաթիլտէ Սերավոլոյի հետ:

Յիսգշաբթի, 31 Յունուար 2008-ին, Պրև. Մահտեսան տեսակցութիւն մը ունեցաւ Կիպրոսի Ելրոպական Կազմակերպութեան տնօրէն Դոկտ. Նեօֆիտոս Խրիստիոսի հետ, քննարկելու Ելրոպական յատկացումներէն օգտուելու կարելիութիւնները, մեր գրասենեակին կողմէ անցեալ տարի Ծրագրումներու Գրասենեակ Ներկայացուցած մեծածախս երեք ծրագիրներուն կապակցութեամբ:

Յիսգշաբթի, 7 Փետրուար 2008-ին, Պետական Ներկայացուցիչը հանդիպում մը ունեցաւ Նիկոսիոյ քաղաքապետ Տիկ. Էլեսի Սաւրույի հետ, Ներկայութեամբ Թեմական ժողովի ատենապետ Պրև. Սեպուհ Դավիթեանի եւ ARC+ ճարտարապետական ընկերութեան Ներկայացուցիչներու: Տեսակցութիւնը կը վերաբերէր «Լիտրա Բալաս»ի հայկական հին գերեզմանատան վերանորոգութեան հետ կապուած կարգ մը աշխատանքներուն:

Յիսգշաբթի, 14 Փետրուար 2008-ին, Էսթոնիայի Թալլին քաղաքապետարանի պատուիրակութիւն մը, գլխաւորութեամբ Պրև. Թոմաս Վիթսութի, հանդիպում ունեցաւ Պրև. Մահտեսեանին հետ:

Ուրբաթ, 22 Փետրուար 2008-ին, Պետական Ներկայացուցիչը, Ներկայութեամբ Թեմական ժողովի ատենապետ Պրև. Սեպուհ Դավիթեանի, տեսակցութիւն մը ունեցան UNDP-ACT Ծրագիրներու պատասխանատու Դոկտ.

ժագօ Սիլերգի հետ, Վիքթորիա փողոցի մեջ գտնուող Ս. Աստուածածին Եկեղեցւոյ վերանորոգութեան աշխատանքներուն կապակցութեամբ:

Ճարաթ, 23 Փետրուար 2008-ին, Յայաստանի Պետական Համալսարանի Տնտեսագիտութեան բաժանմունքի փոխ-տնօրին Դոկտ. Վարդան Սարգսեան եւ Առեւտուրի փոխ-նախարար Պրն. Վահրամ Դուշչեան, որ Կիպրոս կը գտնուեին ուսումնական աշխատանքներու գծով, հանդիպում մը ունեցան Պրն. Մահտեանին հետ:

ՀՀ Յունաստանի եւ Կիպրոսի Դեսպանատան Հիւպատոսի այց

Եթօրեայ այցելութեամբ Հինգշաբթի, 31 Յունուար 2008-ին Կիպրոս ժամանեց ՀՀ Յունաստանի եւ Կիպրոսի Դեսպանատան Հիւպատոս Տիկ. Լիլիթ Սարգսեան:

Այս այցելութիւնը կազմակերպուած էր նախաձեռնութեամբ Պետական Ներկայացուցիչ Պրն. Վարդգես Մահտեսանի եւ համագործակցութեամբ ՀՀ Յունաստանի եւ Կիպրոսի Դեսպան Պրն. Վահրամ Կաժոյեանի, դիրացնելու համար Կիպրոս ժամանակաւոր կամ մշտական բնակութիւն հաստատած Յայաստանի Հանրապետութեան քաղաքացիներու անցագիրի հետ կապուած հարցերը:

Նախապես ապահովուած ժամադրութիւններով, Կիպրոսի բոլոր քաղաքներէն Կիպրահայ Յամայնք



Պետական Ներկայացուցիչի Գրասենեակ Ներկայացան աւելի քան 40 անհատներ ու ընտանիքներ, որոնք իրենց գոհունակութիւնը յայտնեցին այս կարգաւորումին գծով: Իր կարգին Յիւպատոս Տիկ. Լիլիթ Սարգսեան բարձր գնահատեց գրասենեակին կողմէ տարւած բժախսդիր աշխատանքը եւ ձեռք ծագուած յաջող արդիւնքին պատճառով որոշուեցաւ շարունակել պարբերական այցելութիւնները:

Ձեռնարկներու ներկայութիւն

Երեքաբթի, 25 Դեկտեմբեր 2007-ին, Տեր եւ Տիկին Վարդգես Մահտեսեան Ներկայ գտնուեցան Լառնացայի Ս. Ստեփանոս Եկեղեցւոյ անուանակոչութեան արարողութեան:

Երեքաբթի, 25 Դեկտեմբեր 2007-ի Երեկոյեան, Տեր եւ Տիկին Վարդգես Մահտեսեան հրաւիրուելով Ներկայ գտնուեցան Յ.Ե.Ս.-ի տարեկան պարահանդեսին, որ տեղի ունեցաւ Նկոսիոյ «Յիլթըն» պանդոկին մէջ:

Ուրբաթ, 28 Դեկտեմբեր 2007-ին, Տեր եւ Տիկին Վարդգես Մահտեսեան Ներկայ գտնուեցան «Յայրենեաց Զայներ» տօնական համերգին, որ կազմակերպուած էր Կիպրոս-Յայաստան Բարեկամութեան Միութեան կողմէ: Այս ձեռնարկը կը վայելէր Պետական Ներկայացուցիչին հովանաւորութիւնը:

Կիրակի, 20 Յունուար 2008-ին, Պետական Ներկայացուցիչը եւ Տիկինը Ներկայ գտնուեցան Մելգոնեան բարերարներու եւ Յրանդ Տիկի հոգեհանգստեան արարողութեանց:

Կիրակի, 27 Յունուար 2008-ին, Տեր եւ Տիկին Մահտեսեան Ներկայ գտնուեցան Թեմիս Կաթողիկոսական Փոխանորդ Վարուժան Արք. Յերկելեանի 40ամ-

Եայ Յոբելենական տօնակատարութեան ու ճաշկերոյթին, որու ընթացքին խօսք առաւ Պրն. Մահտեսեան, գևահատելով Վարուժան Սիրազանի ծառայութիւնը ու նուիրումը հանդեպ Յայ Եկեղեցւոյ եւ Կիպրոսի գաղութին:

6 Մարտ եւ 11 Մարտ 2008-ին յաջորդաբար, Տէր եւ Տիկին Վարդգես Մահտեսեան ներկայ գտնուեցան Ազգային Առաջնորդարանի կազմակերպած զոյգ ձեռնարկներուն, մասնակցութեամբ Ալեքսանդր եւ Անահիտ Թոփչեաններու:

Չորեքշաբթի, 19 Մարտ 2008-ին, Տէր եւ Տիկին Վարդգես Մահտեսեան ներկայ գտնուեցան Յամագգայինի «Օշական» մասնաճիւղի կազմակերպած «Վերելք» երգիծական ներկայացումին: Զեռնարկը կը հովանաւորէր Պետական Ներկայացուցիչը:



Ծանօթանակը Կիպրոսի Հանրապետութեան Օրենքներուն

Ինքնութեան Թուղթ (Identity Card)

Կիպրոսի Հանրապետութեան Ինքնութեան Թուղթերը Երկու տեսակի են.-

- 1. Քաղաքային Ինքնութեան Թուղթ (Civil Identity Card)**
- 2. Գաղթականի Ինքնութեան Թուղթ (Refugee Identity Card)**

1. Քաղաքային Ինքնութեան Թուղթ (Civil Identity Card)

Իւրաքանչիւր անհատ որ ամբողջացուցած է 12 տարիքը, պարտաւոր է ունենալու Քաղաքային Ինքնութեան Թուղթ:

Քաղաքային Ինքնութեան Թուղթ կրնան ստանալ հետեւեալ անձերը.-

- ♦ Կիպրահպատակներ
- ♦ Կիպրական ծագում ունեցող անհատներ
- ♦ Օտարերկրացիներ, որոնք օրինաւոր կարգավիճակով ժամանակաւոր կամ մնայուն բնակութիւն հաստատած են Կիպրոսի մեջ:

2004 թուականեն սկսեալ, անոնք որոնք կը փափաքին փոխարինել իրենց Ինքնութեան Թուղթերը զանազան

պատճառներով (իին, փճացած, կորսուած եւյն.) կը ստանան Նոր տեսակի (Եւրոպական) Քաղաքային Ինքնութեան Թուղթ, դիմումին կցելով հետեւեալ փաստաթուղթերուն պատճենները.-

- ◆ Յատուկ լրացուցիչ դիմումագիր
- ◆ 1 լուսանկար 4 x 3 սմ. հաստատուած համայնքի նոտարին կողմէ, իսկ անձամբ ներկայանալու պարագային հաստատումի կարիք չկայ
- ◆ Ամուսնութեան վկայագիր կամ ամուսնալուծման վկայագիր (Եթէ մականունի փոփոխութեան հարց կայ)
- ◆ Անձնագիրի պատճեն, եթէ անհատը երկքաղաքացի է
- ◆ Օտարերկրացի սակայն Կիպրոս օրինաւոր բնակութիւն հաստատողներուն համար, ներկայացնել Օտարերկրացի գրանցումի տետրակ (Alien Registration Certificate), բնակութեան արտօնագիր (Residence permit) եւ Ծննդեան վկայագիր (Birth Certificate), անշուշտ վերջինս պէտք է թարգմանուած ըլլայ Յունարէնի կամ Անգլերէնի
- ◆ Սակ Եւրո 8.54

Դիմումները կը յանձնուին Նահանգային Գրասենեակներ (Γραφεία Επαρχιακών Διοικήσεων) կամ Քաղաքացիներու Սպասարկութեան Կեդրոններ (Κέντρα Εξυπηρέτησης του Πολίτη):

2. Գաղթականի Ինքնութեան Թուղթ (Refugee Identity Card)

Գաղթականի Ինքնութեան Թուղթ կը տրուի անձնական կալուածներէ տեղահան եղած անհատներուն:

Տեղահան կը նկատուին այն անհատները.-

- ♦ Որոնք, մինչեւ Ներխուժումը եւ Ներխուժումին առաջ, կը բնակէին գրաւեալ շրջաններուն մէջ
- ♦ Որոնք, մինչեւ Ներխուժումը եւ Ներխուժումին առաջ, կը բնակէին ազատ շրջաններուն մէջ ասպարեզի պատճառով, սակայն անձնական բնակարան ունեին գրաւեալ շրջաններուն մէջ
- ♦ Որոնք, մինչեւ Ներխուժումը եւ Ներխուժումին առաջ, առժամաբար օտար Երկիրներ կ'ապրէին, Կիպրոս բնակած ժամանակաշրջանին իրենց առաջարկուած մնայուն կամ ժամանակաւոր պարտաւորութիւններուն բերումով, այն պայմանով որ Ներգաղթողներ չեն

Գաղթականի Ինքնութեան Թուղթի դիմում կրնան Ներկայացնել վերոյիշեալ պայմաններով անհատները, իրենց դիմումին կցելով հետեւեալ փաստաթուղթերուն պատճենները.-

- ♦ Յատուկ լրացուցիչ դիմումնագիր
- ♦ Ամուսնութեան վկայագիր կամ Ամուսնութեան/Նշանտուքի յայտարարութիւն թերթի մը մէջ
- ♦ Ծննդեան վկայագիր
- ♦ Ծնողքի Գաղթականի Ինքնութեան Թուղթեր
- ♦ Ծնողքի Ինքնութեան Թուղթերու թիւեր

Յաւելեալ տեղեկութիւններու համար հեռաձայնել
22-867664 թիւին:

ՄՈՏԱԼՈՒՏ ԶԵՂՆԱՐԿՎԵՐ

Ճամբու Ապահովութեան Կանխազգուշութիւն

Երեսփոխանական Գրասենեակի կազմակերպութեամբ եւ երկու բաժինով ծեռնարկներ տեղի պիտի ունենան Նիկոսիոյ Bank of Cyprus-ի Կեդրոնական շենքին «Solona Triantafyllides» սրահին մէջ, ինքնաշարժի արկածներու կանխազգիլման միջոցներուն մասին եւ յետ արկածի պատճառած դժուարութիւններուն ազդեցութիւնը անհատներուն եւ ընտանիքի անդամներուն վրայ:

Զեռնարկները պիտի ընդգրկեն.-

➤ Տեսաերիզի ցուցադրութիւն

➤ Խօսք արկածահար երիտասարդներու եւ ծնողներու

➤ Խօսք ճամբու ապահովութեան խորհրդատու

Անտրեաս Փափասի

Առաջին մաս

Ուրբաթ, 9 Մայիս 2008, կ.ե. Ժամը 8.00-ին

Երկրորդ մաս

Ուրբաթ, 16 Մայիս 2008, կ.ե. Ժամը 8.00-ին

14 տարիքին վեր բոլորին ներկայութիւնը քաջալերելի է օգտուելու այս իրայատուկ ծեռնարկներէն:

Մուտքը ազատ

Վարդգէս եւ Մակի
 Մահտեսեաններ
 Քրիստոսի Յարութեան
 Սուրբ տօնին առիթով
 ի սրտէ կը շնորհաւորեն
 Կիպրահայ Համայնքը,
 մաղթելով առողջութիւն եւ
 արեւշատութիւն:

*Քրիստոս յարեաւ ի մեռելոց,
 օրինեալ է Յարութիւնն Քրիստոսի*

ԿԻՊՐԱՅԱՅ ՀԱՄԱՅՆՔԻ ՊԵՏԱԿԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉԻ ԳՐԱՍԵՆԵԱԿ

Քաղաքական Գրասենեակ

9B & C Kastorias Street, Ayia Paraskevi, 2002 Strovolos

Հեռախոս 22- 45 45 40, Հեռատիպ 22- 42 46 42

Ել. Հասցե office@armenianmp.com

Ուստայնեց՝ <http://www.armenianmp.com>

Խորհրդարանական Գրասենեակ

Office Δ-2-2, House of Representatives, 1402 Nicosia

Հեռախոս 22- 40 72 02, Հեռատիպ 22- 40 74 42

Ել. Հասցե vmahdessian@parliament.cy